ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

Տնտեսագիտության դոկտոր Վ. Ե. ԽՈՋԱԲԵԿՅԱՆ

ՍՄԿԿ XXVI համագումարը կարևոր ուղենիշ է կուսակցության ու սովետական երկրի պատմության մեջ, համաշխարհային վիթխարի նշանակություն ունեցող իրադարձություն։ Համագումարը լսեց ու քննարկեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Լ. Ի. Բրեժնևի զեկուցումը, ուր տրված է ՍՍՀՄ-ում կոմունիզմի հետագա կառուցման ծավալուն ծրագիրը, «սահմանված են ՍՄԿԿ ներքին ու արտաքին քաղաքականության գլխավոր ուղությունները, բացահայտված են այն հիմնական պրոբլեմները, որոնք պետք է լուծվեն, նշված են դրանց լուծման ուղիները» («Պրավդա»)։

ՍՄԿԿ XXVI համագումարը հաստատեց նաև ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1981—1985 թթ. և մինչև 1990 թթ. ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունները։ Այն կանխորոշեց զարգացած սոցիալիստական հասարակությունը կոմունիստականի վերաճելու ընթացքում կուսակցության տնտեսական ստրատեգիան, բացահայտեց ժողովրդական տնտեսության՝ գիտատեխնիկական առաջընթացով թելադրվող կառուցվածքային փոփոխությունների, նրա դինամիկ զարգացման, հասարակական արտադրության արդյունավետության, աշխատանքի արտադրողականության բարձրացման և երկրի առջև ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրների փոխկապակցվածությունները։

ՍՄԿԿ XXVI համագումարը տասնմեկերորդ հնգամյակի գլխավոր խնդիրը համարեց. «Ապահովել սովետական մարդկանց բարեկեցության հետագա աճը ժողովրդական տնտեսության հաստատուն, առաջընթաց զարգացման հիման վրա, գիտատեխնիկական առաջընթաց զարգացման հիման վրա, գիտատեխնիկական առաջադիմությունն արագացնելու և էկոնոմիկան զարգացման ինտենսիվ ուղու վրա փոխադրելու, երկրի արտադրական պոտենցիալը ավելի ռացիոնալ օգտագործելու, ռեսուրսների բոլոր տեսակներն ըստ ամենայնի խնայելու և աշխատանքի որակը բարելավելու հիման վրա»։

Տասնմեկերորդ հնգամյակում նախատեսվում է ազգային եկամուտը ավելացնել 18—20 (ՀՍՍՀ-ում 28—30) տոկոսով, հանրային աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 17—20, արդյունաբերական արտադրանքի արտադրությունը ավելացնել 26—28, արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 23—25 տոկոսով։ Գյուղատնտեսության մեջ մեքենայացման աստիճանի բարձրացման, ագրոարդյունաբերական կոմպլեքսների հետագա ծավալման և, ընդհանուր առմամբ, գյուղատնտեսության ինտենսիվ զարգացումն ապահովելու շնորհիվ այդ ճյուղի տարեկան միջին ար-

տադրությունը հնգամյակում կավելանա 12—14 տոկոսով՝ հանրային աշխատանքի արտադրողականությունը 22—24 տոկոսով բարձրանալու պայմաններում։ Դա նշանակում է, որ աշխատանքի արտադրողականության բարձրացման շնորհիվ գյուղատնտեսության մեջ հնարավոր կլինի ապահովել ոչ միայն ավելացող արտադրանքի ամբողջ ծավալը, այլև կրճատել այդ ճյուղում զբաղված աշխատող ձեռքերի թիվը։

Առանձնապես մեծ մասշտաբներ կընդունի կապիտալ շինարարությունը։ Հինգ տարում ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումները կավելանան 12—15 տոկոսով։ Դա բնական է, քանի որ զարգացող ժողովրդական տնտեսությունը պահանջում է հիմնադրել նոր կառույցներ, տեխնիկապես վերազինել ավելի վաղ սկսված կառույցները, լուծել ոչ արտադրական բնույթի օբյեկտների, ինչպես նաև բնակարանային շինարարության և այլ խնդիրներ։ Նախատեսվում է շինարարության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 15—17 տոկոսով։

Տասնմեկերորդ հնգամյակը մի նոր առաջընթաց քայլ կհանդիսանա մեր երկրում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի հետագա ամրապնդման, նրա տնտեսական պոտենցիալի բազմապատկման ճանապարհին։ Այսօր ՍՍՀՄ-ո բնութագրվում է վիթխարի տնտեսական պոտենցիալով։ Բավական է ասել, որ 1980 թ. երկրում արտադրվող հասարակական ամբողջական արդյունքը փաստացի գործող գներով հաշված գերազանցում էր մեկ տրիլիոն 50 միլիարդ ռուբլուց, իսկ ազգային հարստությունը՝ 2,5 տրիլիոն ռուբլուց։

Ելնելով երկրում ստեղծված տնտեսական վիթխարի պոտենցիալից՝ կուսակցությունն ամբողջ կարևորությամբ առաջադրեց պարենային ծրագրի և երկրում ժողովրդական սպառման ապրանքների արտադրության զարգացման ծրագրի մշակման ու իրականացման խնդիրները։ Ծրագրի հիմնական նպատակն է՝ ապահովել ժողովրդական սպառման ապրանքների արտադրության հետագա զարգացումը, դրանով իսկ բավարարելով բնակչության պահանջմունքները արժեքավոր գյուղատնտեսական մթերքների և արդյունաբերական ապրանքների այնպիսի տեսակներով, ինչպիսիք են բամբակե, բրդե, մետաքսե և վուշե գործվածքներն ու դրանցից կարված հագուստեղենը, մանկական ապրանքների տեսականին, կուլտուր-կենցաղային ու տնտեսական նշանակություն ունեցող բազմազան այլ ապրանքներ։ Ելնելով այդ ծրագրի պահանջներից՝ նոր հնգամյակում նախատեսվում են արդյունաբերության «Ա» խմբի ճյուղերի համեմատ «Բ» խմբի ճյուղերի աճի առավել արագ տեմպեր, ինչպես նաև առևտրի, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման ոլորտի բարելավում։ «Հիմնական ուղղություններում» նոր հնգամյակի մերձավորագույն խնդիրները շաղկապված են երկարատև հեռանկարային պրոբլեմների հետ։

ՍՄԿԿ XXVI համագումարը լուրջ ուշադրություն դարձրեց միութենական հանրապետությունների և տնտեսական շրջանների տնտեսության կոմպլեքսային զարգացման, աշխատանքի հասարակական բաժանման սիստեմում դրանց հետագա մասնագիտացումը բարելավելու խնդիրներին։ Ընդհանուր առմամբ, ժամանակակից արտադրական ինտեգրացիայի պայմաններում, աշխատանքի խոր բաժանման և կոոպերացման հիման վրա ամեն մի հանրապետության մասնագիտացումը հասարակական արտադրության արդյունավետության բարձ-

բացման կարևորագույն ելակետն է, որն ապահովվում է ռեգիոնալ պլանավորումը համապետականի հետ զուգակցելու միջոցով։ Դա իր արտահայտությունն է գտել նաև տասնմեկերորդ հնգամյակում և մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանում երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումներում։ Ռեգիոնալ խնդիրների առումով կարևոր նշանակություն է տրվում նաև առանձին տնտեսական շրջանների էկոնոմիկայի զարգացման ներքին հնարավորությունների և բնակչության աճի տեմպերի միջև որոշակի հավասարակշռվածություն ապահովելուն։ Այսինքն կուսակցության այդ կարևոր փաստաթղթում տնտեսական զարգացման խնդիրները զուգակցվում են ռեգիոնի ժողովրդագրական իրավիճակի հետ։

«Հիմնական ուղղություններում» ուղղակի նշվում է. «Միջոցներ ձեռնարկել հասնելու եղած և նոր ստեղծվող աշխատատեղերի հաշվեկշռվածությանը աշխատանքային ռեսուրսների հետ»։ Նման հարցադրումը բացատրվում է նրանով, որ ՍՍՀՄ միասնական էկոնոմիկայի պայմաններում նրա ամեն մի տնտեսական շրջան, յուրաքանչյուր կոնկրետ ժամանակաշրջանում բնութագրվում է բնակչության աճի որոշակի տեմպերով և աշխատանքային ռեսուրսների կազմավորման ուրույն աղբյուրներով։ Դա նրանց արտադրողական ուժերի զարգացման, սոցիալ-տնտեսական պայմանների և բնակչության պատմական զարգացման օրինաչափությունների արտահայտությունն է։ Օրինակ, վերջին 21 տարիների ընթացքում՝ 1959—1980 թթ., եթե ՍՍՀՄ-ում բնակչությունն ամբողջությամբ վերցրած ավելացել է 26,7, ապա Ռուսաստանյան Ֆեդերացիայում աճը կազմել է 17,7, Ուկրաինայում և Բելոռուսիայում՝ 19,3, Վրաստանում՝ 24,7, Մոլդավիայում՝ 37,5, մերձբալթյան հանրապետություններում՝ 23,7, մինչդեռ միջինասիական հանրապետություններում այն կազմել է 88,5, Ղազախստանում՝ 59,8, Ադրբեջանում՝ 65,3 և Հայկական ՍՍՀ-ում՝ 73,4 տոկոս։

ՍՍՀՄ առանձին տնտեսական շրջաններ տարբերվում են ոչ միայն բնակչության աճի տեմպերով, այլև տարիքային կազմով։ Միջինասիական, Հայկական, Ղազախական, Ադրբեջանական հանրապետություններում բնակչության կազմում բարձր է երեխաների տեսակարար կշիռը։ Այնինչ ՍՍՀՄ եվրոպական մասի բոլոր հանրապետություններում, Ուրալում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում բնակչության կազմում համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեն աշխատանքային և թոշակառու տարիքի մարդիկ։ Այստեղ միաժամանակ բարձր է հանրային տնտեսության մեջ կանանց զբաղվածության մակարդակը։ Այդ հանրապետություններում արդեն լրիվ չափով սպառվել են հանրային տնտեսությունը ի հաշիվ տնային և անձնական օժանդակ տնտեսության աշխատուժով համալրելու ռեզերվները։ Սակայն Միջին Ասիայում, Հայկական, Ղազախական, Ադրբեջանական հանրապետություններում, Հյուսիսային Կովկասի ավտոնոմ մարզերում տասնմեկերորդ հնգամյակի տարիներին հանրային արտադրության մեջ առաջին անգամ աշխատանքի պահանջ ներկայացնող բնակչության մեծ թվի հետ մեկտեղ բարձր տոկոս են կազմում նաև տնային և անձնական օժանդակ տնտեսություններից հանրային տնտեսություն մուտք գործող աշխատանքային ռեսուրսների ռեզերվները. Դրանք երիտասարդներ են և կանայք։

Ժողովրդագրական այդ առանձնահատկությունների հետևանքով երկրի մի մասում աշխատանքային ռեսուրսների սուր պակաս է զգացվում, քանի որ իջել է աշխատանքային տարիքի բնակչության աճի տեմպը, իսկ այլ տնտեսական շրջաններ, ընդհակառակը, բնութագրվում են աշխատանքային ռեսուրսների բարենպաստ հաշվեկշռով։ Դրա հիման վրա ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման տասնմեկերորդ հնգամյակի հիմնական ուղղություններում զուգակցվում են տնտեսական շրջանների տեղական առանձնահատկություններն ու երկրի սոցիալ-տնտեսական զարգացման օրինաչափություններից բխող ընդհանրությունները։ Խնդիր է դրվում 1981—1985 թթ. միայն ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման ապահովել երկրի ազգային եկամտի աճի առնվազն 85—90, արդյունաբերական արտադրանքի աճի ավելի քան 90, գյուղատնտեսական արտադրանքի 100 տոկոսը։ Ըստ որում, եթե ՍՍՀՄ եվրոպական մասում, Ուրալում, Սիբիրում, Հեռավոր Արևելքի շրջաններում խնդիր է դրվում նյութական արտադրության ճյուղերում (գերազանցապես արդյունաբերության մեջ), առանց լրացուցիչ աշխատանքային ռեսուրսներ ընդգրկելու, ապահովել հասարակական ամբողջական արդյունքի լրիվ հավելաճը, ապա այլ տնտեսական շրջանների, այդ թվում մեր հանրապետության նյութական արտադրության մի շարք ճյուղերում, մասնավորապես վերամշակող արդյունաբերության մեջ, հասարակական արտադրության ինտենսիվ զարգացման հետ միասին, շեշտը դրվում է նոր լրացուցիչ աշխատանքային ռեսուրսներ ընդգրկելու հարցի վրա։ Այդ նպատակով տասնմեկերորդ հնգամյակի տարիներին Հայկական ՍՍՀ-ում նախատեսվում են արդյունաբերության զարգացման համեմատաբար ավելի բարձր տեմպեր, քան շատ այլ միութենական հանրապետություններում։

Հայկական ՍՍՀ արդյունաբերությունն իր զարգացման թափով համընթաց կգնա Ադրբեջանական հանրապետության հետ և կզիջի միայն Մոլդավական ու Վրացական հանրապետություններին (հինգ տարում այդ հանրապետություններում այն կաճի 30—33 տոկոսով)։ Օրինակ, նախատեսվում է ՀՍՍՀ արդյունաբերական արտադրանքը 1981—1985 թթ. ավելացնել 29—32 տոկոսով (ՌՍՖՍՀ-ում այն կմեծանա 24—27, Ուկրաինայում՝ 20—23, Բելոռուսիայում՝ 26—29, Ուզբեկստանում՝ 28—31, Ղազախական ՍՍՀ-ում՝ 22—25, Լիտվական, Կիրգիզական և Թուրքմենական հանրապետություններում՝ 21—24, Տաջիկականում՝ 24—27, Լատվիականում՝ 15—18, Էստոնականում՝ 14—17 տոկոսով)։

Բանն այն է, որ տասներորդ հնգամյակի տարիներին Հայաստանի բնակչությունը թևակոխեց վերարտադրության մի այնպիսի փուլ, երբ խստորեն ավելացավ նրա աշխատանքային տարիքի բնակչությունը։ Այսուհետև նույնպես աշխատանքային տարիք թևակոխող բնակչությունը, եթե միության եվրոպական մասի հանրապետություններում կշարունակի նվազել, ապա Հայաստանում տասնմեկերորդ հնգամյակի տարիներին ևս կմնա աշխատանքային ռեսուրսների համալրման հիմնական աղբյուր։ Միայն տասներորդ հնգամյակի հինգ տարիներին աշխատանքային տարիք մուտք գործեց ընդամենը 25 հազարով ավելի քիչ մարդ, քան 1961—1970 թթ. տասը տարվա ընթացքում։ Դա հանրապետությունում աշխատանքային տարիք մուտք գործող բնակչության ամենամեծ թիվն է, որ նկատվել է այս հարյուրամյակի ընթացքում և որը կմնա անգերազանցելի ընդհուպ մինչև XX դարի 90-ական թթ. կեսերը։

ՍՄԿԿ XXVI և ՀԿԿ XXVII համագումարները, ելնելով Հանրապետության բնակչության բարձր և անընդհատ ավելացող խտությունից, ջրային ռեսուրսների ոչ մեծ պոտենցիալից, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի նյութական հիմքը կազմող մի շարք առաջատար ճյուղերի զարգացման բարձր մակարդակից և դրա համապատասխան ինժեներատեխնիկական ու բանվորական բարձրորակ կադրերի առկայությունից, նախատեսում են արդյունաբերության մեջ այսուհետև ևս զարգացնել որակավորում պահանջող, աշխատատար, քիչ նյութատար, քիչ էներգատար և ոչ ջրատար ճյուղերը։

Նախատեսվում է տասնմեկերորդ հնգամյակում առավել ուշադրություն դարձնել ռադիոտեխնիկական, սարքաշինության, էլեկտրոնային և թեթև արդյունաբերության, ինչպես նաև տեղական գյուղատնտեսական հումքի առկայությամբ պայմանավորված սննդի արդյունաբերության վերամշակող ճյուղերի զարգացմանը։ Դա պայմանավորված է ոչ միայն Հանրապետության աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու հարցով։ Բանն այն է, որ այդ ճյուղերի ձեռնարկությունները, լինելով աշխատատար, միաժամանակ մեծ պահանջներ չեն հարուցում ջրի և զբաղեցրած տարածության տեսակետից, պահանջում են որակավորում ունեցող աշխատուժ, ինչպես նաև կարող են տեղաբաշխվել ցանկացած վայրում։ Պակաս դեր չի խաղում նաև Հանրապետության խիտ բնակեցվածությունը։ Մինչդեռ հիշատակվող արտադրությունները զբաղեցնում են համեմատաբար քիչ տարածություն, չեն աղտոտում մթնոլորտն ու միջավայրը։ Հանրապետությունում համապատասխան որակյալ կադրերի առկայության հետ մեկտեղ այդ ճյուղերի շատ արտադրություններ հետաքրքրություն են ներկայացնում նաև կանանց աշխատուժը զբաղեցնելու առումով, որ չափազանց կարևոր է գյուղական շրջանների և փոքր քաղաքների համար։

Տասնմեկերորդ հնգամյակում Հանրապետության արդյունաբերության զարգացման հարցերը սերտորեն կշաղկապվեն շրջակա միջավայրի պահպանման խնդիրների հետ։ Այդ նպատակով գունավոր մետաղաձուլության ու քիմիական արդյունաբերության որոշ ճյուղերի առավել համեստ տեմպերով աճը կօգնի մթնոլորտը ապականող նյութերի արտանետումը համապատասխանեցնել սանիտարական նորմաներին։ Նախատեսվում է զգալիորեն կրճատել սև պղնձի և ծծմբաթթվի արտադրությունը Ալավերդու լեռնաքիմիական կոմբինատում, միջոցներ կձեռնարկվեն Երևան քաղաքի օդային ավազանը վնասակար արտանետումներից պահպանելու համար։

Տասնմեկերորդ հնգամյակում լուրջ ուշադրություն կնվիրվի Հանրապետության գյուղատնտեսության զարգացմանը։ Նրա համախառն արտադրանքի միջին տարեկան ծավալը կավելանա 10—12 տոկոսով։ Նախատեսվում է տարեկան միջին հաշվով արտադրել 310 հազար տոննա հացահատիկ, 240—260 հազար տոննա խաղող, 400—430 հազար տոննա բանջարեղեն, ընդլայնել ստուղների, եթերային յուղերի արտադրության մասշտաբները։ Այսուհետև ևս Հայաստանի գյուղատնտեսության զարգացմանը բնորոշ կլինի նրա ճյուղային կառուցվածքի բարելավումը մասնագիտացման հետագա խորացման հիման վրա։ Դա պայմանավորված է ոչ միայն Հանրապետության բնակլիմայական պայմաններով, այլև գյուղատնտեսական որոշ մթերքներով բնակչության պահանջները բավարարելու անհրաժեշտությամբ։ Գյուղատնտեսության զարգացման այդ միտումը կուղեկցվի առավել բարձր եկամտաբերության և երկրի

գյուղատնտեսության մեջ մասնագիտացվածության ուղղությունը բնորոշող այնպիսի ճյուղերի ընդլայնման հետ, որոնք ներկայացնում են խաղողի արդյունաբերական նշանակություն ունեցող բազմաթիվ տեսակների, մի շարք բանջարաբոստանային կուլտուրաների, որոշ պտուղների և եթերային յուղերի արտադրությունը։ Հասկանալի է, որ դրանք բավարարում են ոչ միայն տեղական պահանջները, այլև իրենց արդյունաբերական նշանակությամբ ստանում են համամիութենական նշանակություն։ Տասնմեկերորդ հնգամյակին բնորոշ կլինի գյուղատնտեսության ինտենսիվ զարգացումը։ Դա, ինչպես նշվեց ՀԿԿ XXVII համագումարում, նախատեսվում է իրականացնել հիմնականում ոռոգելի հողատարածությունների ավելացման, գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության, անասունների ու թռչունների մթերատվության բարձրացման, ինչպես նաև՝ գյուղատնտեսական արտադրության կառուցվածքի բարելավման հաշվին։

Այսպիսով, հասարակական աշխատանքի տերիտորիալ բաժանման վրա հիմնված գյուղատնտեսական արտադրության տնտեսապես նպատակահարմար մասնագիտացումը, գյուղատնտեսական բնական ռեսուրսների, գյուղատնտեսության մասնագիտացման հիմնական ուղղությունը ներկայացնող ճյուղերի հետագա զարգացման հնարավորությունների լրիվ և ռացիոնալ օգտագործումը, քաղաքային ու մերձքաղաքային տնտեսությունների զարգացումը կապահովեն գյուղատնտեսության մեջ աշխատուժի ինտենսիվ օգտագործման մակարդակը։

ՍՄԿԿ XXVI համագումարը հատուկ կարևորություն տվեց գյուղատնտեսական մթերքների արտադրությունը ավելացնելու բնագավառում գոյություն ունեցող լրացուցիչ հնարավորությունների օգտագործմանը անձնական օժանդակ տնտեսությունների զարգացման շնորհիվ։ ՍՄԿԿ XXVI համագումարին տրված հաշվետու զեկուցման մեջ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Լ. Ի. Բրեժնևը անդրադառնալով այդ հարցին նշեց. «Փորձը վկայում է, որ նման տնտեսությունները կարող են էական նեցուկ լինել մսի, կաթի և մի քանի այլ մթերքների արտադրության գործում։ Աշխատավորներին պատկանող այգիները, թռչունները, անասունները մեր ընդհանուր հարստության մի մասն են»։

Անձնական օժանդակ տնտեսությունը սոցիալիզմին հատուկ օբյեկտիվ տնտեսական կատեգորիա է, որ տալիս է երկրում արտադրվող գյուղատնտեսական մթերքների շուրջ 29 տոկոսը։ Օժանդակ տնտեսություններում արտադրվող գյուղատնտեսական մթերքների մի մասը սպառում են իրենք արտադրողները, իսկ մի մասն էլ գնում են կա՛մ պետությունը, կա՛մ էլ հասարակության այն անդամները, ովքեր դրա կարիքը ունեն։ Միության մասշտաբով գյուղական բնակչության սպառած գյուղատնտեսական մթերքների շուրջ կեսի աղբյուրը սեփական արտադրությունն է։ Գյուղատնտեսական մթերքների արտադրության մասշտաբներն ավելին կլինեին, եթե գյուղում ապրող բնակչության մեծ մասը զբաղվեր անձնական օժանդակ տնտեսությամբ։ ՀԿԿ XXVII համագումարում բերված տվյալներից երևում է, որ հանրապետությունում գյուղական վայրերում ապրող բնակչության ավելի քան 57 տոկոսը չի պահում կով և ոչխար, 91 տոկոսը՝ խոզ, այսինքն, ապրելով գյուղում՝ բնակչության մի մասը չի ստեղծում նյութական բարիքներ և սպառում է ուրիշների արտադրած գյուղատնտեսական մթերքները։

ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների, ինչպես նաև ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1981 թ. հունվարին ընդունած «Քաղաքացիների անձնական օժանդակ տնտեսություններում գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու լրացուցիչ միջոցառումների մասին» որոշման կենսագործումը հնարավորություն կստեղծի ավելացնել ոչ միայն գյուղատնտեսական աշխատատար մթերքների արտադրության չափերը, այլև լուծել գյուղում սոցիալ-տնտեսական բնույթի շատ խնդիրներ։ Այդ որոշումների ոգուն համապատասխան հարցերի լուծումը առանձնապես կարևոր է հանրապետության ծայրամասային շրջաններում։ Ընդհանուր առմամբ, Հայաստանում կոլտնտեսությունների և սովխոզների բանվոր-ծառայողների անձնական օժանդակ տնտեսություններին հատկացվող հողատարածությունները պետականորեն նախատեսվող նորմաներից պակաս են։ Յուրաքանչյուր ընտանիքի հաշվով դրանք ավելի քիչ են, քան Հարևան անդրկովկասյան և միջինասիական հանրապետություններում։ Միաժամանակ, տասնմեկերորդ հնգամյակում նախատեսվում է հանրապետությունում աստիճանաբար կրճատել ծրխախոտի մշակության մասշտաբները։ Դա հարցի չափազանց ճիշտ լուծում լինելով հանդերձ, կազդի կոլտնտեսականների և սովխոզների բանվորների ընտանիքների եկամուտների վրա։ Ուստի արտադրության այդ ճյուղից ազատվողներին այլ արտադրություններում ընդգրկելու հետ միասին պետք է լրջորեն մտահոգվել անձնական օժանդակ տնտեսությանը հատկացվող հողատարածությունների ավելացմամբ։ Այդ հարցի հաջող լուծումը մսի, կաթի, կարտոֆիլի, բանջարեղենի և գյուղատնտեսական այլ արժեքավոր կուլտուրաների արտադրության չափերը ավելացնելու հետ մեկտեղ, կնպաստի գյուղից դեպի քաղաք բնակչության միգրացիայի նվազմանը, ուստի և խոշոր քաղաքների բնակչության հիպերտրոֆիկ աճի տեմպերի դանդաղեցմանը։

Անձնական օժանդակ տնտեսությունը, լինելով լրացուցիչ եկամտի աղբյուր, միաժամանակ նպաստում է բնակչության բարեկեցության և աշխատանքի արդյունավետության բարձրացմանը։ Բնակչության, կազմակերպությունների և հիմնարկների օժանդակ տնտեսությունների, բանվորների ու ծառայողների այգեգործական ու բանջարանոցային ընկերությունների հետագա զարգացումը հնարավորություն կտա այսուհետև ևս զուգակցել աշխատանքային տարիքի բնակչության զբաղվածությունը հանրային ու անձնական օժանդակ տնտեսություններում։ Օժանդակ տնտեսություններում կավելանա աշխատանքային տարիքի բնակչության այն մասը, որը փոքր տարիքի երեխաներ խնամելու պատճառով ի վիճակի չի լինի մասնակցելու հանրային տնտեսությանը։ Օժանդակ տնտեսություններում հավանաբար կավելանա անչափահասների զբաղվածությունը։ Ուրբանիզացիայի ներկա դարում դա կհանդիսանա աշխատանքային տարիք մուտք գործող սերնդի աշխատանքային դաստիարակության չափազանց կարևոր բնագավառ։

Տասնմեկերորդ հնգամյակում, ելնելով հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման առանձնահատկություններից, նախատեսվում է նյութական արտադրության մյուս ճյուղերի՝ շինարարության, տրանսպորտի, կապի, առևտրի հետագա ընդլայնում, դրանց նյութատեխնիկական բազայի կատարելագործում։ Կապիտալ ներդրումները նախորդ հնգամյակի համեմատությամբ կավելանան 30 տոկոսով, երկաթուղային ցանցի ընդարձակումը կուղեկցվի բեռնաշրջանառության և ուղևորների փոխադրման աճով (համա-

պատասխանաբար 28,4 և 28,6 տոկոսով)։ Ավտոմոբիլային բեռնաշրջանառությունը կավելանա 45, ընդհանուր օգտագործման տրանսպորտի ավտոբուսներով ուղևորաշրջանառությունը՝ 30 տոկոսով։ Նոր հնգամյակում և երկարատև հեռանկարում բոլոր կողմերով կճյուղավորվի Երևանի մետրոպոլիտենի ցանցը։

Դեպի ինտենսիվ զարգացման ուղին էկոնոմիկայի անցումը արագացնելու և ժողովրդատնտեսական բոլոր ճյուղերի գիտատեխնիկական առաջընթացն ապահովելու գործում խիստ մեծանում է գիտության դերը։ Այն ավելի որոշիչ նշանակություն է ձեռք բերում ոչ միայն սոցիալիզմի նյութատեխնիկական բազան կոմունիստականի վերափոխելու, այլև ազգային եկամտի հավելաճն ապահովելու գործում։ Աշխատանքային ռեսուրսների պրոբլեմի սրման կապակցությամբ այդ բնական գործոնի դերը նվազում և, ընդհակառակը, խստորեն բարձրանում է աշխատանքի արտադրողականության դերը։ Լ. Ի. Բրեժնևը գիտության զարգացումը համարեց գիտատեխնիկական առաջադիմության հիմքերի հիմքը։ Ներկայումս մեր երկիրը տալիս է աշխարհի գիտական արդյունքի շուրջ մեկ երրորդը, և գիտահետազոտական ու փորձարարական աշխատանքներում ընդգրկված աշխատողների թվով աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը։ Ելնելով երկրի գիտական մեծ պոտենցիալից, ՍՄԿԿ XXVI համագումարը ֆունդամենտալ և կիրառական հետազոտությունների առաջնակարգ խնդիրը համարեց գիտատեխնիկական առաջադիմության արագացումը, գիտության և արտադրության փոխադարձ կապերի ուժեղացումը, գիտատեխնիկական նվաճումները արտադրության մեջ արմատավորելու ժամկետների կրճատումը, գիտատեխնիկական կարևորագույն պրոբլեմների լուծման նպատակային կոմպլեքսային ծրագրերի մշակումն ու իրացումը։ Այդ խնդիրները հավասարապես վերաբերում են նաև Հայաստանում գիտության զարգացմանը, մանավանդ ներկայումս, երբ հանրապետությունը բնակչության 10 հազար շնչի հաշվով գիտական աշխատողների թվով Միությունում բնութագրվում է ամենաբարձր ցուցանիշով։

Գիտատեխնիկական առաջընթացը, վերջին հաշվով, իր արտահայտությունը կգտնի հասարակական արտադրության վերելքի, բնակչության աճող նյութակուլտուրական պահանջմունքների բարելավման, անձի համակողմանի զարգացման համար ավելի լայն հնարավորություններ ընձեռելու մեջ։

Այս առումով համագումարի որոշումներում կենտրոնական տեղ է հատկացվում բնակչության սոցիալական զարգացման հարցերին։ «Հիմնական ուղղություններում» նախատեսվում է հնգամյակում ազգային եկամտի մեջ շարունակել սպառման ֆոնդի բաժինն ավելացնելու կուրսը։ Հինգ տարում ՍՍՀՄ բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները կավելանան 16—18, բանվոր-ծառայողների ամսական միջին աշխատավարձը 13—16, կոլտնտեսականների աշխատանքի վարձատրությունը 20—22 տոկոսով։ Ավելի ու ավելի կմեծանա սպառման հանրային ֆոնդերի դերը բնակչության սոցիալական պահանջմունքների բավարարման գործում։ 1985 թ. սպառման հանրային ֆոնդերը կհասնեն 138 միլիարդ ռուբլու, որը, ինչպես նշվեց ՍՄԿԿ XXVI համագումարում ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ա. Տիխոնովի զեկուցման մեջ, չորս շնչից բաղկացած ընտանիքի համար միջին հաշվով կկազմի մոտավորապես 2000 ռուբլի։

XXVI համագումարի որոշումներում մեծ նշանակություն է տրվում ժողովրդագրական քաղաքականությանը, որը զարգացման տարբեր փուլերում բնութագրվել է որպես երկրի սոցիալ-տնտեսական վերափոխումներին, էկոնոմիկայի ու կուլտուրայի զարգացմանը ուղղված պետական քաղաքականության բաղկացուցիչ մասը։ Արդի փուլում ժողովրդագրական քաղաքականությունը ձեռք է բերում նոր իմաստ ու նշանակություն՝ կապված կանանց զբաղվածության արդյունավետության բարձրացման, նրանց աշխատանքային և հասարակական գործունեությունը մայրության հետ խելամտորեն զուգակցելու, երեխաների խնամքի ու դաստիարակության մակարդակը բարձրացնելու՝ կանանց ընձեռվող աշխատանքային արտոնությունների շրջանակն ընդլայնելու, տնային հոդսերը թեթևացնող բազմաթիվ այլ խնդիրների լուծման հետ։ Լ. Ի. Բրեժնևը արդյունավետ ժողովրդագրական քաղաքականության մշակումը համարեց բնական և հասարակական գիտությունների առաջնահերթ խնդիրներից մեկը։ Ի թիվս այլ հարցադրումների, ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումներում արձանագրվեց. «Կիրառել արդյունավետ ժողովրդագրական քաղաքականություն, նպաստել ընտանիքի՝ որպես սոցիալիստական հասարակության կարևորագույն բջջի ամրապնդմանը, մայրությունը աշխատանքային ու հասարակական գործունեությանը կնոջ ակտիվ մասնակցության հետ զուգակցելու լավագույն պայմանների ստեղծմանը. բարելավել հասարակության հաշվին երեխաների և անաշխատունակների խնամքը»։

Սոցիալիզմի օրոք բարձր են գնահատվում մոր ընտանեկան աշխատանքն ընդհանրապես և երեխաներ մեծացնելու համար նրա գործադրած անփոխարինելի ջանքերը՝ մասնավորապես։ Չէ՞ որ կինը ոչ միայն նյութական բարիք ստեղծող է, այլև մայր։ Նա հասարակությանը պարգևում է նրա նոր անդամին, նոր մարդուն։ Ահա թե ինչու համագումարը որոշեց. «...մեծացնել երեխաներ ունեցող ընտանիքներին և նորապսակներին ցույց տրվող պետական օգնությունը։ Ընդլայնել այդ ընտանիքներին տրվող առավելություններն ու արտոնությունները, նպաստել նրանց բնակարանային-կենցաղային պայմանների բարելավմանը, կատարելագործել երեխաների համար տրվող պետական նպաստների սիստեմը։ Բարելավել երեխաների սնունդն ու սպասարկումը նախադպրոցական հիմնարկներում, դիշերօթիկ դպրոցներում, դպրոցներին ու մանկատներին կից գիշերօթիկներում»։ Ելնելով դրանից, ըստ երկրի շրջանների, 1981—1983 թթ. ընթացքում, աշխատող կանանց համար սահմանվելու է մասնակիորեն վճարովի արձակուրդ՝ մինչև երեխայի մեկ տարեկան, իսկ հետագայում՝ մինչև մեկուկես տարեկան դառնալը։ Կմտցվեն միանվագ պետական նպաստներ՝ 50 ռուբլի առաջին և 100 ռուբլի երկրորդ ու երրորդ երեխան ծնվելիս։ Երեք օրով կավելացվեն մինչև 12 տարեկան երկու և ավելի երեխաներ ունեցող աշխատող կանանց ամենամյա արձակուրդները։ Հեռծննդյան շրջանում, երեխամորը մեկ տարի ժամանակով մասնակի վճարումով արձակուրդ տրամադրելու պայմաններում հնարավոր կդառնա մանկամսուրներում մինչև մեկ տարեկան երախաների փոխարեն ավելացնել ավելի բարձր տարիքի երեխաների ընդգրկվածությունը, շատացնելով մանկամսուրներում տեղերի թիվն այն հաշվով, որ ավելի մեծ իրական հնարավորություններ ստեղծվեն փոքր երեխաներ ունեցող մայրերի հասարակական աշխատանքային ակտիվությունը բարձրացնելու համար։ Դա հնարավորություն կտա մեծացնել ավելի առողջ և ամրակազմ երեխաների։ Նախատես-

վում է, օրինակ, 1981—1985 թթ. Հայկական ՍՍՀ-ում շահագործման հանձնել 50,9 հազար տեղով նախադպրոցական հիմնարկներ, նախորդ հնգամյակի 28 հազար տեղի դիմաց։

Դրա հետ մեկտեղ մայր-աշխատողը պետք է մտահոգվի հանրային տնտեսության մեջ իր աշխատանքի մասին։ Իսկ այդ հոգսերը քիչ չեն. որակավորման բարձրացում, վերավորակավորում, լրացուցիչ հանգստի կազմակերպում, որոնք խլում են նրանից, ըստ էության, այնքան ժամանակ ու ջանքեր, որքան աշխատող տղամարդուց։ Այդ նպատակով «Հիմնական ուղղություններում» խնդիր է դրվում. «Փոքր երեխաներ ունեցող կանանց համար հնարավորություն ստեղծել աշխատելու ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ, սահող գրաֆիկով, ինչպես նաև աշխատելու տանը։

Արդյունավետ միջոցներ ձեռնարկել հեշտացնելու տնային տնտեսության մեջ աշխատանքը»։

Տասնմեկերորդ հնգամյակում և մինչև 1990 թ. ընկած ժամանակաշրջանում նախատեսվող այս բոլոր միջոցառումները կհանգեցնեն կանանց հասարակական ակտիվության բարձրացմանը, կնոջ աշխատանքային, հասարակական և մայրական պարտականությունների միջև խելամիտ համամասնությունների ստեղծմանը, երեխաների խնամքի ու դաստիարակության գործում հասարակության դերի բարձրացմանը։

Նոր հնգամյակում մեծ ծրագրեր կիրականացվեն բնակչության առողջապահության ու լուսավորության, կուլտուրայի զարգացման, բնակարանային շինարարության, սոցիալական ապահովության հետագա բարելավման, աշխատավորության հանգստի կազմակերպման, տուրիզմի, ֆիզկուլտուրայի և սպորտի ծավալման, քաղաքների ու գյուղերի բարեկարգման և սոցիալական նպատակներ հետապնդող բազմաթիվ այլ հարցեր լուծելու ուղղությամբ։ Հինգ տարում երկրում շահագործման կհանձնվեն 530—540 միլիոն, իսկ հանրապետությունում՝ 7,5 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածություն։ Սովետական ժողովրդի սոցիալական ապահովության բարելավման համար լրացուցիչ կտրամադրվի վեց միլիարդ ռուբլի։

Գիտության ու տեխնիկայի խոշոր տեղաշարժերը, արտադրության տեխնիկական բազան վերափոխելով՝ նոր պահանջներ են առաջադրում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար որակյալ մասնագետներ և բանվորական կադրեր պատրաստելու ասպարեզում։ Դա բխում է արտադրողական ուժերի իրային տարրերի և անձնական գործոնի լրիվ համապատասխանության ընդհանուր տնտեսական օրենքի օբյեկտիվ պահանջներից և ապահովվում է այդ տարրերի ներդաշնակ զարգացմամբ։ Դրանով են բացատրվում երկրում ոչ միայն բարձրագույն և միջնակարգ մասնագիտական, այլև պրոֆ-տեխնիկական կրթության համակարգում մինչև օրս տեղի ունեցած և նոր հնգամյակում սպասվելիք փոփոխությունները։ Ներկայումս երկրում ուսուցման բոլոր ձևերում ընդգրկված է շուրջ 100 միլիոն մարդ, որից մոտ 10 միլիոնը՝ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում։ Ըստ որում, հարկ է հիշել, որ ներկայումս բնակչության 10 հազար շնչի հաշվով բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության շրջանավարտների թվով Հայկական ՍՍՀ-ն բնութագրվում է ամենա-

բարձր ցուցանիշով. 1979 թ. ՍՍՀՄ միջին ցուցանիշը կազմել է 78, իսկ ՀՍՍՀ-ում՝ 88 մարդ։

Ներկայումս լուրջ ուշադրություն է նվիրվում բանվորական որակյալ կադրերի պատրաստմանը։ 1970-ական թթ. սկզբներից պրոֆեսիոնալ տեխնիկական ուսումնարաններում աստիճանաբար ավելացան միջնակարգ կրթությամբ պատրաստվող որակյալ կադրերը։ Ներկայումս այդ ցանցում է սովորում պրոֆտեխնիկական կրթության համակարգում պատրաստվող բանվորական կադրերի շուրջ 56 տոկոսը։ Հնգամյակում նախատեսվում է պրոֆտեխնիկական կրթության միջոցով պատրաստել 13 միլիոն բանվորական կադրեր, միջնակարգ կրթությամբ բանվորական կադրերի թիվն ավելացնել 60 տոկոսով։ Հայկական ՍՍՀ-ում պրոֆտեխնիկական ուսումնարաններում սովորողների թիվը հնգամյակի վերջում կհասնի 140 հազարի, ներկայիս ավելի քան 50 հազարի փոխարեն։ 1982 թ. սկսած հանրապետությունում բանվորական կադրեր կպատրաստվեն միայն միջնակարգ կրթությամբ։ Այդ բոլորը կիրականացվեն սպառման հանրային ֆոնդերի հաշվին։ Բավական է ասել, որ երկրի հանրակրթական դպրոցների յուրաքանչյուր աշակերտի հաշվով տարեկան ծախսվում է 180 ռուբլի, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր սովորողի հաշվով՝ ավելի քան 680, բուհերում սովորողների հաշվով՝ ավելի քան 1000 ռուբլի։ Մսուրում ամեն մի երեխայի ծախսը կազմում է 560, իսկ մանկապարտեզում՝ մոտ 480 ռուբլի, որի 80 տոկոսը վճարում է պետությունը։ Մեկ հիվանդի հաշվով կատարված օրական ծախսերի համար պետությունն առանձնացնում է 10 ռուբլի։

ՍՄԿԿ XXVI և ՀԿԿ XXVII համագումարներում որպես հույժ կարևոր խնդիր ուշադրության արժանացան ինչպես արտադրության տեղաբաշխման հետագա կատարելագործման, այնպես էլ փոքր քաղաքների և գյուղական շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման հարցերը։ Այս առումով հանրապետությունում շատ բան է արվել։ Միայն տասներորդ հնգամյակում հանրապետության փոքր ու միջին քաղաքներում և բնակավայրերում արդյունաբերության տարբեր ճյուղերի ավելի քան 70 ձեռնարկություններ ու մասնաճյուղեր կառուցելու, արդյունաբերությունը ավելի բարձր տեմպերով (75 տոկոսով) զարգացնելու շնորհիվ այդ բնակավայրերի տեսակարար կշիռը արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալի մեջ հասավ 36 տոկոսի։ Դրանով հանդերձ ՀԿԿ XXVII համագումարը նորից անդրադարձավ արդյունաբերությունը հանրապետության փոքր քաղաքներում և գյուղական շրջաններում տեղաբաշխելու, հանրապետության ծայրամասային գյուղական շրջանների ոչ արտադրական ոլորտի ճյուղերը ավելի արագ թափով զարգացնելու հարցերին, այն հաշվով, որ լուծում ստանան մի շարք խնդիրներ. ապահովվի գյուղական բնակչության զբաղվածությունը տեղում, հնարավոր լինի զգալիորեն մեղմացնել գյուղական բնակչության արտահոսքը դեպի քաղաքներ, խստորեն բարելավվի փոքր քաղաքների և գյուղական բնակչության սպասարկման մակարդակը։ Արդյունաբերության և ոչ արտադրական ոլորտի ճյուղերի տեղաբաշխման հետագա բարելավումով միայն կհաղթահարվի աշխատուժի օգտագործման բնագավառում ներկայումս նկատվող միակողմանիությունը։ Որոշ փոքր ու միջին քաղաքների զարգացման ընթացքում պետք է ապահովել նրանց այնպիսի ներդաշնակ վերելքը, որը լիակատար պայմաններ ստեղծի ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց աշխատուժի օգտագործման

արդյունավետության բարձրացման և բնակչության պահանջմունքների համակողմանի բավարարման համար։ Թեև վերջին քսանամյակում փոքր քաղաքներում բնակչությունը մի քանի անգամ ավելի արագ է ավելացել, քան մեծ քաղաքներում, բայց իրականում արդյունաբերությունը և բնակչությունը դեռևս շարունակում են կենտրոնանալ հանրապետության երեք քաղաքներում՝ Երևանում, Լենինականում և Կիրովականում։ Մասնավորապես Երևանի արդյունաբերության հետագա ընդլայնումը և այստեղ բնակչության կենտրոնացումը դարձել է աննպատակահարմար բազմաթիվ առումներով։ Դա վերաբերում է մթնոլորտի մաքրությանը, ներքաղաքային տրանսպորտի երթևեկության կարգավորմանը, աշխատավայր-բնակավայր տարածությունը փոքրացնելու միջոցով աշխատանքային ռեսուրսների, մասնավորապես կանանց աշխատուժի օգտագործման արդյունավետության բարձրացմանը և բնակչության տրանսպորտային սպասարկման բարելավմանը, բնակչության բնակարանային հարցերի, կենցաղ-սպասարկման, մսուր-մանկապարտեզներում երեխաների ընդգրկվածության և այլ խնդիրների լուծմանը։

Բավական է ասել, որ 1959—1980 թթ. ավելացող քաղաքային բնակչության աճի 47,3 տոկոսը, այսինքն ավելացած 1 մլն 147 հազար քաղաքային բնակչությունից 542,7 հազարը բաժին է ընկել միայն Երևան քաղաքին։ Ներկայումս հանրապետության քաղաքային բնակչության 51,6 տոկոսը բնակվում է Երևանում, իսկ Լենինականի ու Կիրովականի հետ միասին այն կազմում է 70 տոկոս։ Այս քաղաքներում է կենտրոնացած հանրապետության արդյունաբերական անձնակազմի, հիմնական արտադրական ֆոնդերի, թողարկվող արտադրանքի կեսից ավելին։ Բավականին բարձր է Երևանի բնական աճի շնորհիվ ավելացող բնակչության բացարձակ թիվը։ Ուստի Երևանի արդյունաբերության զարգացումը աստիճանաբար կիրականացվի միայն ինտենսիվ գործոնների հաշվին, ավելի շատ միջոցներ տրամադրելով քաղաքի բնակչության անմիջական սպասարկման հետագա բարելավմանը։

Իր ամբողջ կարևորությամբ ծառանում է հանրապետության փոքր քաղաքների և գյուղական վայրերի բնակչության սպասարկման մակարդակի բարձրացման խնդիրը։ Դա, նպաստելով գյուղի ու քաղաքի բնակչության կենսապայմանների մերձեցմանը, գյուղի սոցիալ-տնտեսական կառուցվածքի կատարելագործմանը, կարևոր պայման կդառնա նաև աշխատուժի կենսագործունեության բարձրացման ուղղությամբ։ Համապատասխան տվյալները վկայում են, որ թեև փոքր քաղաքների և գյուղական վայրերի սոցիալ-տնտեսական զարգացման համար հատկացվող միջոցները նախորդ փուլերում տարեցտարի աճի տեմպերով գերազանցել են խոշոր քաղաքներին հատկացվող միջոցների աճի տեմպերին, բայց հանրապետության ծայրամասային շրջաններում բնակչության 10 հազար շնչի հաշվով քիչ է բժիշկների ու բուժսպասարկող անձնակազմի, կենցաղ-սպասարկման բնագավառում աշխատողների թիվը։

Վերջին 20—25 տարիների ընթացքում հիմնովին վերափոխվեց գյուղը։ Հանրապետության ամենահեռավոր անկյուններում անգամ մուտք գործեցին էլեկտրական էներգիան, ռադիոն, հեռուստացույցը, զարգացան կապի և տրանսպորտի միջոցները, բարձրացավ բնակչության կուլտուրական սպասարկման մակարդակը։ Գրեթե ամենուրեք գյուղերում կառուցվեցին գեղեցիկ

քարակերտ տներ, որոնք շատ հարմար են բարեկեցիկ կյանք վարելու համար։ Բայց դրա հետ մեկտեղ գյուղական տները իրենց կոմունալ հարմարություններով զիջում են քաղաքայինին։ Նրանց մեծ մասը չունեն ջեռուցման ցանց, ջրմուղ-կոյուղի։ Շատ գյուղեր գազիֆիկացման կարիք են զգում։ Նոր հնգամյակում համապատասխան լուծում կստանան նաև այդ խնդիրները։

ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների կենսագործումը կնշանավորի էկոնոմիկայի նոր վերելք, երկրի հզոր տնտեսական պոտենցիալի աճ, նոր առաջընթաց քայլ բնակչության նյութական և կուլտուրական պայմանների հետագա բարելավման ասպարեզում։